

ԱՂՕԹՔ

Մեկնողին

Տէ՛ր, շնորհէ իրեն կեանք, ճամբուն վրայ երազին,
 Թող ոչ մէկ ցաւ գայ տանջել հոգին անոր՝ գիրկին մէջ
 Օտարութեան, երբ դառնան դէմքերն անոնց՝ որ առին
 Օր մը հասակ միասին, եղան արցունք, եղան սէր:

Տէ՛ր, շնորհէ իրեն կամք խանդ ու կորով անըսպառ,
 Որ հոգիին հեւքն իսկոյն, վայրկեաններուն իր անել,
 Գիտնայ փոխել նուագի, որ պահերուն իր միմակ,
 Միրտն իր զգայ աւելի՝ լեցուած շունչով մը ընտել:

Ու հոգին, Տէ՛ր, որ այսօր իրն է, պահէ՛ անվրտանգ,
 Պահէ ամբողջ տակաւին քամիներուն դէմ վաղուան.
 Հաւատաւոր, հեռագնաց ըրէ քայլերն իր պարման:

Իսկ երբ նետէ ժամանակն օր մը ստուերն իր դաժան,
 Տէ՛ր, հեռացող սա տղուն խենդ աչքերուն հոգւոյն մէջ,
 Մնայ թող միշտ հաւատքի իր բոցէն շող մը անշէջ:



Վապգէն Ա. Կաթողիկոս Մալեանի հետ